ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» հունիսի 2019թ. N ՄՊ/210-2019

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի նոյեմբերի 10-ի N1582-Ն որոշման 3-րդ կետի պահանջների, արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպման նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող նոր հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝ մեկամսյա ժամկետում համայնքներում ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովներ, հաստատել հանձնաժողովների կազմերը և աշխատակարգերը:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Կ. Գրիգորյանին և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի փրկարար ծառայության վարչության պետ, գնդապետ Հ. Մարգարյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ***

6/28/2019

X

VERIFIED OCSP 6/28/2019 14:57:17 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված N1

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2019 թվականի հունիսի 28-ի N 170/2019 որոշման

Կազմ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող նոր հանձնաժողովի

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Գրիգորյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Ա. Ղուկասյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Դ. Դավթյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ

Անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունից 2 մասնագետներ.

Առողջապահական համակարգից 1 վնասվածքաբան, 1 վարակաբան.

Անասնաբուժական ծառայությունից 1անասնաբույժ.

«Ոռոգում ջրառ» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղից 1 մասնագետ.

ՀԷՑ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ Արմավիրի էլցանցից 1 մասնագետ.

«Վիոլա ջուր» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Մարզային փրկարարական վարչությունից 2 մասնագետ.

Մարզի հակահրդեհային տեսչությունից 1 մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ***Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 26.06.2019 10:06:10 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217

Հավելված N2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2019 թվականի հունիսի 28 ի N 91/210-2019 որոշման

Աշխատակարգ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող նոր հանձնաժողովի

1.Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի (այսուհետ Մարզ) տարածքում գնահատման ու հաշվառման ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2. Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման ծավալից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի (այսուհետ Մարզպետ) ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի համայնքների ղեկավարների (այսուհետ՝ Համայնքների ղեկավարներ) որոշումներով ստեղծված և մշտական գործող հանձնաժողովների կողմից:

3.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառվածվնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման և վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով:

4. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկզկան և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3)գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

5. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս , ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից (այսուհետ Վարչություն) ֆեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հարապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

6. Տեղեկատվությունը ներառում է՝

1) դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2) տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,բնակության և աշխատանքի վայրերը.

3)դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4) դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

7. Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման նպատակով ստեղծվում են՝

1) մարզային հանձնաժողով՝ Մարզպետի որոշմամաբ

2)համայնքանյին հանձնաժողովներ՝ համայնքների ղեկավարների որոշումներով:

8. Հանձնաժողովները գործում են հետևյալ ուղություններով՝

1) գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2)բնակչության գույքին հասցված վնասնարի գնահատում

3)ենթակառուցվածքներին հասցված վնասի գնահատում.

4)բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

9. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են՝

1) մասնագետներ մարզային փրկարարական վարչությունից, մարզի հակահրդեհային տեսչությունից,

2) մասնագետներ մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության , քաղաքաշինության, առողջապահության և սոցիալական ապահովության , ֆինանսական և սոցիալ-տնտեսական տնտեսական զարգացման վարչություններից:

3)մասնագետներ ոռոգման համակարգի, գազամատակարարման, ջրամատատկարարման, էլեկտրամատակարարման, անասնաբուժության մասնագիտացված տարածքային կառույցների:

10. Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով:

11.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

26.06.2019

X

VERIFIED OCSP 26.06.2019 10:05:17 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217